Հետաքրքրության Ներկայացման Հայտ
(Խորհրդատվական Ծառայություններ– Ընկերությունների Ընտրություն)

28 հուլիսի, 2017թ.
Հայաստան
Դրամաշնորհ No: TF 0A0418

Առաջադրանքի անվանումը՝ Հայաստանում Արևային ՖՎ ոլորտի զարգացումների գնահատումը

Հղումը No.: SPP-CS-2/2017

Սույն հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավերը հետևում է ծրագրի գնումների ընդհանուր ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business-ում 2015թ. հունիսի 23-ին և www.gnumner.am (www.procurement.am) կայքում:

Հայաստանի Հանրապետությունը ստացել է դրամաշնորհ Կլիմայի ներդրումների Հիմնադրամից Վերականգնվող Էներգետիկայի Ընդլայնումը ցածր եկամուտ ունեցող Երկրներում Ծրագրի շրջանակներում (ՎԷԸԾ) և նպատակ ունի միջոցների մի մասն ուղղել խորհրդատվական ծառայությունների մատուցմանը՝ Հայաստանի Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի շրջանակներում գնումների իրականացմանը:

Խորհրդատվական ծառայությունները (“Ծառայություններ”) ներառում են՝ Հայաստանի 2016թ. էներգետիկ հաշվեկշռի մշակումը, որը հնարավորություն կտա գնահատել Հայաստանում արևային ՖՎ ոլորտի զարգացումը:

Աշխատանքների շրջանակը
Խորհրդատուն պետք է՝

Առաջադրանք 1. Մշակի Հայաստանի 2016թ-ի Էներգետիկ հաշվեկշիռը:

Առաջադրանք 2. Թարմացնի ԷԳԱԾ-2-ի մոնիտորինգի և գնահատման համակարգը և ներմուծի տվյալները http://neeap-monitor.am կայքում:

Առաջադրանք 3. Իրականացնի Էներգետիկ հաշվեկշռի մշակման նպատակով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համապատասխան աշխատակազմի վերապատրաստումը/կարողությունների ձևավորումը, որը կապահովի 2017 էներգետիկ հաշվեկշռի կազմումը ԷԵԲՊՆ-ի համապատասխան բաժնի կողմից:

Իրականացման տևողությունը – 4 ամիս

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին («Խորհրդատուներ») ներկայացնել իրենց հետաքրքրությունը ծառայություններ տրամադրելիս: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տեղեկություններ տրամադրեն այն մասին, որ իրենք ունեն անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձ ծառայություններ մատուցելու համար:

Ընտրության չափանիշներն են՝

Խորհրդատուների փորձառությունը վիճակագրական ուսումնասիրությունների անցկացման գործում - 40 միավոր,

Խորհրդատուների փորձառությունը էներգետիկ ոլորտի վիճակագրական ուսումնասիրությունների անցկացման և էներգախնայողության/վերականգնվող էներգետիկայի (ներառյալ արևային էներգիայի արտադրության) ցուցանիշների վերլուծության գործում - 60 միավոր:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը պետք է գրավել Համաշխարհային Բանկի Ուղեցույցների 1.9 կետը՝ «Խորհրդատուների ընտրությունը և աշխատանքի ընդունում ՎԶՄԲ փոխառության, ՄԶԸ վարկերի և Համաշխարհային Բանկի վարկառուների դրամաշնորհների շրջանակում", Հունվար 2011թ /վերանայված հուլիս 2014թ./ («Խորհրդատուի ուղեցույց») վրա, որտեղ նշված են Համաշխարհային բանկի քաղաքականությունը և շահերի բախումը:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության կամ ենթախորհրդատվական ձևով՝ բարձրացնելու իրենց որակավորումը:

Խորհրդատուն կընտրվի Որակի վրա հիմնված ընտրություն (ՈՀԸ) մեթոդի համաձայն, որը սահմանված է Խորհրդատուի Ուղեցույցում:

Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով տեղական ժամանակով ժամը 9:00-17:00.

Հետաքրքրությունների հայտը պետք է հանձնել թղթային տարբերակով, կամ էլեկտրոնային ձևով ստորև նշված հասցեով մինչև **2017թ, օգոստոսի 17-ը, 17:00** տեղական ժամանակով:

Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ
Տնօրեն՝ Արմեն Մելկիկյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն;
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -11; e-mail: p.marine@r2e2.am
Վեբ կայք՝ www.r2e2.am